# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**N ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏԵԽՆԻԿԱ-22/19**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **<<05>> 08. 2022թ.**

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Յու.Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ -ն, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 13.07.2022թ.-ին կնքված **ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏԵԽՆԻԿԱ-22/19** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏԵԽՆԻԿԱ-22/19** ծածկագրով գնման պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ 1 399 992 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գինը ավելացնել տասը տոկոսի չափով, այն է՝ 139 999 դրամով սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել և իրականացնել վճարումները սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե | «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ |
| ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա | Հասցե՝ ք.Երեւան, Գ. Նժդեհի21 |
| Ֆ/Ն գործառնական վարչություն | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00243582 | Հ/Հ 2050022129881001 |
| Հ/Հ 900011040947 | ՀՎՀՀ 02235463 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Գ. Յու.Մկրտչյան | Վ. Հովհաննիսյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 1*
*<<05>> 08. 2022թ.*
*ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏԵԽՆԻԿԱ-22/19 ծածկագրով գնման*
*պայմանագրի թիվ 1 համաձայնագրի*

**Վճարման ժամանակացույց**

ՀՀ դրամ

| Ապրանքների մատակարարման | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| **1** | **39714210/1** | **օդորակիչ, 9000 BTU** | - | - | - | - | - | - | - | - | **139 999** | **139 999** | **139 999** | **139 999** | **139 999** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե**
**ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա**
**Ֆ/Ն գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 00243582**
**Հ/Հ 900011040947**
**Գլխավոր քարտուղար**
**Գ. Յու.Մկրտչյան**

(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ**
**Հացե՝ ք.Երեւան, Գ. Նժդեհի21**
**Ինեկոբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 2050022129881001**
**ՀՎՀՀ 02235463**
**Տնօրեն**
**Վ. Հովհաննեսյան**

(ստորագրություն) Կ.Տ